ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.02-48

ք. Երևան «30 » _01_ 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս քոլեջի տնօրեն Ս. Մարտիրոսյանի,ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 40 սովորողների (առանց ընդունելության), կրթաթոշակի հատկացման պարտավորությունները՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.03.01.02 <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ>> ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել կրթաթոշակ, որը կազմում է մինչև 2232000 (երկու միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի
ք. Երևան, Վ. Սարգսյան 3	անվան պետական գյուղատնտեսական
ՀՀ ՖՆ գործառնական վարչության	քոլեջ» ՊՈԱԿ
ՀՀ 900011014114	ք. Գավառ, Ազատության 38
Նախարարության գլխավոր քարտուղար	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
---------- Ն. Հարությունյան	ՀՀ 900178000387
(ստորագրություն)	տնօրեն---------- Ս. Մարտիրոսյան
Կ.Տ	(ստորագրություն)